ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
03.04.2024 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 ՀՎՀՀ-ն		03537581
1.3 Գտնվելու վայրը		ԿՈՏԱՅՔ ՋՐՎԵԺ 4-ՐԴ ՓՈՂ. 1
1.4 Պետական գրանցման համարը		211.171.689714
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-09-03
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		093-63-19-70
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.famcom.am
1.8 Էլեկտրոնային փոստը		hasmikbabayan75@mail.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՔՆԱՐԻԿ	ԳԱՐԱՆՖԻԼՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Նպաստել ներդաշնակ հասարակության ձևավորմանը		
Աջակցել հասարակության խոցելի խմբերի և ընտանիքների համար արժանապատիվ կյանքի պայմանների ստեղծմանը		
Հասարակության խոցելի խմբերին, ինչպես նաև կյանքի դժվար վիճակում հայտնված ընտանիքներին և երեխաներին մատուցել բազմաբնույթ ծառայություններ (սոցիալական, հոգեբանական, կրթական, մշակութային, իրավաբանական և այլն)		
Իրականացնել երիտասարդական ծրագրեր, աջակցել երիտասարդության հասարակական ակտիվության բարձրացմանը, աջակցել երիտասարդների քաղաքացիական մասնակցությանը, նրանց սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը, երկրի զարգացման գործընթացում նրանց դերի բարձրացմանը		
Նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և համամարդկային արժեքների տարածմանը		
Իրականացնել համայնքների զարգացմանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ		
Աջակցել պրոբացիոն ծառայությունների ներդրմանն ու զարգացմանը		
Իրականացնել մշակութային տարաբնույթ ծրագրեր, նպաստել մշակութային արժեքների տարածմանը, մշակութային հուշարձանների պահպանմանը		
Նպաստել շրջակա միջավայրի, բնության պահպանմանն ուղղված տարաբնույթ ծրագրերի իրականացմանը		
Իրականացնել բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորմանն ուղղված տարաբնույթ ծրագրեր		
Իրականացնել գրքույկների, ձեռնարկների, ինչպես նաև տեղեկատվական բնույթի թերթիկների, բրոշյուրների և կրթական, բացատրական այլ նյութերի պատրաստում, տպագրություն և տարածում		
Կազմակերպել կոնֆերանսներ, սեմինարներ, վերապատրաստումներ, երիտասարդական ֆորումներ, հավաքներ և օրենքով չարգելված այլ միջոցառումներ ուղղված մարդու իրավունքների, կանանց, երեխաների և երիտասարդների հիմնախնդիրների, սոցիալական աշխատանքի զարգացման, խոցելի խմբերի կարիքների արձագանքման մեխանիզմների, դրական ծնողավարման, երիտասարդների հասարակական ակտիվության, մասնակցության և այլ թեմաներով		
Մասնակցել վերը նշված ուղղություններով հանրային քաղաքականության մշակման գործընթացներին		
Աջակցել ցանցերի և կոալիցիաների գործունեության զարգացմանը		
Իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն և հիմնել տնտեսական ընկերություն, որոնցից ստացված շահույթը կուղղվի կանոնադրական նպատակների իրականացմանը		
Հաստատել կայուն համագործակցություն ՀՀ պետական կառույցների, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու թեմերի, այլ հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ համընդհանուր նպատակներ իրականացնելու նպատակով		
Հասարակական կազմակերպությունը կարող է իրականացնել նոր սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն		
4. Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		8

Digitally signed by AVANESYAN HASMIK 5911750287
Date: 2024.04.08 14:17:46 AMT

4.2 Կամավորների թիվը	0
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	1

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	11018 Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում	Մեծամոր	ՀՀ Արմ մ Մեծ համ կյ դժ Իրավիճ հայտ և հաշմանդ ունեցող երեխ ընտանիք ապր զարգ, կրթ ստան և հասարակ շրջ լիար ներ համար անհն հասանելի և մատչելի սոցիալ-հեգ վերականգ ծառայութ տրամ երեխ՝ ընտ ապրելու իրավունքի իրացմանն աջակցություն և այլընտրանքային շուրջօրյա խնամքի կանխարգելում	Ավարտված
2	11018 Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում	Արթիկ	ՀՀ Շիր մ Արթիկ համ կյանքի դժ իրավիճ հայտ և հաշման ունեցող երեխ՝ ընտանիք ապր զարգ, կրթ ստան և հասարակ շրջ լիար ներ համար անհր հասանելի և մատչելի սոցիալ-հոգ վերականգ ծառայութ տրամ երեխ ընտ ապրելու իրավունքի իրացմանն աջակցություն և այլընտրանքային շուրջօրյա խնամքի կանխարգելում	Ավարտված
3	Հաշվետու համայնքների և ներառական սոցիալական պաշտպանության համար կայուն ՔՀԿ-ներ և տեղական գործընկերությունները ՀՀ-ում	Արմավիր, Մեծամոր, Իջևան, Նոյեմբերյան	Սոցիալական ծառայությունների միջոցով նպաստում աղքատության նվազմանը	Ընթացքի մեջ
4	Ընտանիք և համայնք ծրագիր	Մեծամոր, Արմավիր, Արթիկ, Իջևան, Նոյեմբերյան	Աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան առնվազն 500 երեխաների ընտանիքում ապրելու հիմնարար իրավունքի իրացմանը, երեխայի և ընտանիքի կյանքի դժվարին իրավիճակի կանխարգելմանը կամ հաղթահարմանը և նրանց սոցիալական ներառմանը	Ավարտված
5	Աջակցություն կանանց և նրանց երեխաների կարողությունների բարելավմանը և զարգացմանը	Մեծամոր	Կանանց և նրանց երեխաների կարողությունների բարելավում և զարգացում	Ավարտված
6	Արթիկի երեխաների ցերեկային կենտրոնին նվիրաբերություն	Արթիկ	Արթիկի երեխաների ցերեկային կենտրոնի տարածքի ընդլայնման շինարարական աշխատանքներ	Ավարտված
7	Մեծամորի արվեստի դասասենյակին նվիրաբերություն	Մեծամոր	Արվեստի դասասենյակի՝ հիմնում Արմավիրի մարզի՝ Մեծամոր քաղաքի Սբ. ՂԱԶԱՐ եկեղեցու տարածում	Ընթացքի մեջ
8	Երեխաների պաշտպանության բարելավում 2020 թվականի Արցախյան պատերազմից տուժած անապահով երեխաների և ընտանիքների համար	Մեծամոր	Բարելավել պատերազմից տուժած խոցելի երեխաների և ընտանիքների հոգեբանական բարեկեցությունը և պաշտպանել երեխաների իրավունքները Արցախում և Հայաստանում	Ավարտված
9	Արցախից տեղահանվածներին սննդով ապահովում	Մեծամոր	Արցախից տեղահանվածներին սննդով ապահովում	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	11018 Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում	Մեծամոր	Ավարտված	ՀՀ Արմ մ Մեծ համ կյ դժ Իրավիճ հայտ և հաշմանդ ունեցող երեխ՝ ընտանիք ապր զարգ, կրթ ստան և հասարակ շրջ լիար ներ համար անհն հասանելի և մատչելի սոցիալ-հեգ վերականգ ծառայութ տրամ երեխ՝ ընտ ապրելու իրավունքի իրացմանն աջակցություն և այլընտրանքային շուրջօրյա խնամքի կանխարգելում	Իրականացված է

2	11018 Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում	Արթիկ	Ավարտված	ՀՀ Շիր մ Արթիկ համ կյանքի դժ իրավիճ հայտ և հաշման ունեցող երեխ ընտանիք ապր զարգ, կրթ ստան և հասարակ շրջ լիար ներ համար անհր հասանելի և մատչելի սոցիալ-հոգ վերականգ ծառայութ տրամ երեխ ընտ ապրելու իրավունքի իրացմանն աջակցություն և այլընտրանքային շուրջօրյա խնամքի կանխարգելում	Իրականացված է

8. Տարեկան մուտքեր՝	
8.1 Դրամական միջոցները	156,823,914
8.2 Գույքը	1,901,600
Ընդամենը	158,725,514

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ		
Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	20,963,200	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
2	19,215,900	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	40,179,100	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝	
10.1 Դրամական միջոցները	159,289,232
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		159,289,232

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝	
11.1 Դրամական միջոցները	40,179,100
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		40,179,100

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝			
Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	
Նշումներ			

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____6_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ընտանիք և համայնք» բարեգործական հասարակական կազմակերպություն

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 477-Ն ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01 հունվարի 2023թ. մինչև 31 դեկտեմբերի 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն 1

Հասարակական կազմակերպության 2023թ. գործունեության մասին հաշվետվություն 5

Crowe

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ընտանիք և համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության ղեկավարությանը և խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է ՀՀ ՊԵԿ Նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանով հաստատված «Հասարակական կազմակերպությունների գործունեության» հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 01 հունվարի 2023թ. մինչև 31 դեկտեմբերի 2023թ. ժամանակաշրջանի դրությամբ Ծրագրերի (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից թիվ ԴՏՊ-11414-11018/23ԸՀԱՐՄ և թիվ ԴՏՊ-11414-11018/23ԸՀԾ դրամաշնորհի պայմանագրերի շրջանակներում ֆինանսավորվող «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» ծրագրեր, «Թուֆենկյան Բարեգործական Հիմնադրամ»-ի կողմից թիվ 01-23/FC շնորհի տրամադրման «Ընտանիք և համայնք» ծրագիր, «Անապահով ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման» ծրագիր, «Կանանց աջակցման կենտրոն» Հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագիր, «Թուֆենկյան Բարեգործական Հիմնադրամ»-ի կողմից նվիրաբերության ծրագրեր, «2020 թվականի Արցախյան պատերազմից տուժած անապահով երեխաների և ընտանիքների բարելավման» ծրագիր, «Թուֆենկյան Բարեգործական Հիմնադրամ»-ի կողմից դրամաշնորհի տրամադրման «Արցախից տեղահանվածներին օգնություն» ծրագիր) ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆինանսավորման հաշվի հաշվետվությունը, որը ներկայացվել է դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում:

Մեր կարծիքով՝

- Կից հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, որոնք ենթարկվել են աուդիտի, տալիս են վերը նշված Ծրագրերի՝ 31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ, դրամական միջոցների վիճակի և վճարված դրամական միջոցների ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի, ինչպես նաև նվիրաբերված գույքի նպատակայնությունը և անհրաժեշտությունը:
- Կազմակերպությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված դրամաշնորհային միջոցներն օգտագործել են միայն Ծրագրերի նպատակների համար՝ համաձայն Կազմակերպության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքված պայմանագրերի, և դրամաշնորհային միջոցներից ստացված գումարները չեն օգտագործվել այլ նպատակների համար:
- Կազմակերպության կողմից պատրաստված ՀՀ ՊԵԿ Նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանով հաստատված «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը» տալիս է ճշմարիտ և իրական պատկերը:

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Crowe

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների լուսաբանում

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններին, որտեղ ներկայացված է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ծրագրերի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են՝ օժանդակելու «Ընտանիք և համայնք» ԲՀԿ-ի ղեկավարությանը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, ծրագրերի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություններում նկարագրված հաշվապահական հաշվառման դրակարկղային սկզբունքի, ինչպես նաև վերը նշված պայմանագրերի համապատասխան դրույթների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցրի նախարարության կողմից սահմանված կարգի համաձայն կազմելու և ճշմարիտ ներկայացնելու համար:

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՀՀ ՊԵԿ Նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանով հաստատված «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության» պատրաստման համար, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համար, որը ղեկավարության որոշմամբ անհրաժեշտ է ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը հնարավոր դարձնելու համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և

ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Crowe

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
Առաջադրանքի պատասխանատու

04 ապրիլի 2024թ.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 08.04.2024 14:15